21.06 Սրուցիսն է Ավել

Ստեփանավանի թիվ 2 հիմնական դպրոցի
9-րդ <<ա>> դասարանի դասղեկի 2022-23 ուստարվա
ընթացքում կատարած դասղեկական աշխատանքների

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դասղեկ՝ Գայանե Սուքիասյան

Դասարանի աշակերտների թիվ	21
Տղաներ	9
Աղջիկներ	11
ԿԱՊԿՈՒ	1
Գերազանցիկներ	6
Առաջավորներ	6
Դասարանի որակը	57%
Դասարանի առաջադիմություն	100%

Դասարանի նկարագիրը

IX <<ա>> դասարանում սովորում են 21 աշակերտ /9 տղա, 12 աղջիկ/: Դասարանում գերազանց առաջադիմությամբ սովորում են 6 աշակերտներ /Հակոբյան Գագիկ, Բալայան Գառնիկ, Ասրյան Բելա, Ղազարյան Նարե, Սերոբյան Վարդան, Վարոսյան Արթուր/, առաջավորների թիվը 6 է /Աբրամյան Միլենա, Ալեքսանյան Թամարա, Մեսրոպյան Մարի, Շահվերդյան Անահիտ, Ջիլավյան Իննա, Ջիլավյան Մելանյա /:

Դասարանում տիրում է առողջ մրցակցային, հանդուրժողական, փոխըմբռնման, փոխհարգանքի, ընկերական, համագործակցային մթնոլորտ: Հասակակիցների փոխհարաբերություններում չկան արտահայտված կոնֆլիկտային ու անհանդուրժողական իրավիճակներ, բացակայում է նաև բուլինգային վերաբերմունքը որևէ աշակերտի նկատմամբ:

Դասարանը կազմակերպել և իրականացրել է **<<Վերջին դաս>>** միջոցառումը՝ հանդես գալով գեղեցիկ, հուզիչ և հումորային կատարումներով: Ուսումական տարվա ընթացքում դասարանը կազմակերպել և իրականացրել է մի շարք բաց-դասեր, մասնակցել մրցութային դասերի, ինչպես նաև քաղաքային, մարզային ու

հանրապետական մրցույթների և գրանցել հաղթանակներ, պատվավոր հորիզոնականներ:

Դասղեկական ժամերին կազմակերպված հանդիպումներն ուղղված են եղել հիմնականում աշակերտների նախնական մասնագիտական կողմնորոշման բացահայտմանը, ինչպես նաև մի շարք մասնագիտությունների մասին լուսաբանմանն ու քննարկմանը: Դասղեկական ժամերին զրույցներ են վարվել աշակերտների սոցիալականացմանն ուղղված թեմաներով, նրանց տարիքային առանձնահոտկությունների, խառնվածքի տիպերի, բնավորության շեշտվածության, շփվողականության, կոնֆլիկտայնության բացահայտման վերաբերյալ անցկացվել են թեսթեր: Անցկացվել են դասալսումներ աշակերտների ուսումնական առաջադիմության, ակտիվության, դասարանում տիրող մթնոլորտի, ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ փոխհարաբերությունների ուսումնասիրման, խնդիրների բացահայտման ու կանխարգելման նպատակով:

Համագործակցային ու ամուր է նաև դասղեկ - ծնող կապը. երկուստեք բարձրաձայնվում են բոլոր տեսակի մտահոգությունները /ուսումնական, առողջական, վարքային, միջանձնային փոխհարաբերություններ, հաճախակի բացակայություններ/, քննարկվում, որոշվում լուծման եղանակներ ու ճանապարհներ, ինչպես անհատական զրույցների, ծնողական հանդիպումների:

Դասարանի մեծամասնությունն արդեն ունի որոշակի մասնագիտական կողմնորոշում, ինչը դեռ կարող է տարբեր գործոններով պայմանավորված փոփոխությունների ենթարկվել կամ ամրապնդվել: Դասարանի մի մասը ուսումնառությունը պատրաստվում է շարունակել ավագ դպրոցում, մի քանիսը՝ վարժարանում, մի մասը՝

քոլեջում, մի քանիսն էլ կտեղափոխվեն մայրաքաղաք՝ որևէ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում սովորելու: